

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆ

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԱԳՆ Մահմանակից երկրների վարչության պետ
a.avagyan@mfa.am*

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐԳԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1918–1921 թթ.)

1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարը նշմարեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության տասնամյա (1908-1918 թթ.) կառավարման վախճանը: Պատերազմում կրած պարտությունը, կուսակցության և կառավարության ղեկավարների գաղտնի փախուստը երկրից, Իթթիհատի կառավարման տարիներին գործած հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկվելու զգացումները շփոթության մթնոլորտ ստեղծեցին թուրքական հասարակությունում: 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանի հինգերորդ հանձնաժողովի լսումները, 1919-1922 թթ. երիտթուրքերի դատավարությունները, իթիլաֆական կառավարության կողմից նախորդ կառավարության գործած հանցագործությունների քննադատությունները հաշվի առնելով, իրավացիորեն կարելի է պնդել, որ հայոց ցեղասպանությունը փաստացի ճանաչած առաջին պետությունը թուրքական պետությունն էր, չնայած այն հանգամանքին, որ հանցագործներին պատժելու գործընթացը մնաց անավարտ, իսկ քեմալականների իշխանության հաստատումը դարձավ երիտթուրքական իշխանության երկրորդ շրջան:

Սույն հոդվածում փորձ է արվում հակիրճ անդրադառնալ 1918-1921 թթ. թուրքական մամուլում հայերի տեղահանության և զանգվածային ոչն-

չացման (tehcir ve taktil) քննարկումներին և առաջ քաշվող տեսակետներին: Նշված ժամանակաշրջանում ազդեցիկ էին թուրքական հակամարտող և իրար նկատմամբ թշնամաբար տրամադրված իթթիհատական և իթթիլաֆական հատվածները, ինչպես նաև թափ առած ազգայնական շարժումը, որն իրականացվում էր դեռևս պատերազմի տարիներին երիտթուրքական կուսակցության կողմից մշակված ծրագրի համաձայն: Շարժման հաջողություններով պայմանավորված մտավորականության շրջանակներում կրկին սկսեց ուժեղանալ իթթիհատականների ազդեցությունը և հայերի ոչնչացումը քննադատողներն աստիճանաբար հրաժարվեցին հրապարակայնորեն հանդես գալ այդ խնդրի վերաբերյալ: Ուսումնասիրելով 1918-1921թթ. թուրքական մամուլի հրապարակումները, կարելի է պնդել, որ ի սկզբանե այդ քննարկումների ուղղվածությունը պայմանավորված է եղել տեղահանության և ոչնչացման որոշման կայացման և իրականացման այն առանձնահատկությամբ, որ արևմտահայության ոչնչացումը տեղի է ունեցել ժողովրդական (թուրք, քուրդ, չերքեզ...) լայն զանգվածի ներգրավմամբ ու ակտիվ մասնակցությամբ¹, թեև ցեղասպանության բուն ծրագրի մշակողների և հրամաններ արձակողների շրջանակը շատ սահմանափակ էր, իսկ հայերի ոչնչացման որոշումը երիտթուրքական կուսակցության վերնախավում երկար տարիներ հասունացող զարգացում էր²:

¹ Քրիստոնյա բնակչության ոչնչացման մեղադրանքով ձերբակալված Օսմանյան խորհրդարանի նախագահ և Թալեաթ փաշայի կառավարությունում արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեին Բեքիրադա բանտում 1919 թ. ապրիլի 12-ին այցելության է գալիս Իթիլաֆ կուսակցության առաջնորդներից գնդապետ Սադըքը, որի հետ խոսակցության ժամանակ Հալիլը քննադատում է իթիլաֆական կառավարության կողմից արտակարգ ռազմական դատարանների ստեղծումը, նշելով. «Անատոլիայում շատ քիչ թուրք կա, որոնք կապ չունեն այս տեղահանության խնդրի հետ (Bu tehcir işiyle alakadar olmayan Türk Anadolu'da pek azdır). Նման ճանապարհով ահաբեկելով ժողովրդի մի ստվար զանգված, նրան սարեր էք հանելու, այդ կարևոր գործում միայն միությամբ և միասնությամբ կարող ենք պաշտպանել հայրենիքը», տե՛ս Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, İstanbul, 1986, s. 239.

² Տե՛ս **Авакян Арсен**, 2013, 41-62.

Թուրքական աղբյուրների մեծ մասը ցեղասպանության ծրագրի մշակման և իրականացման հիմնական պատասխանատու նշում է ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթին³:

Թուրք պատմաբան Հիքմեթ Բայուրը նույնիսկ պնդում է, թե «Ներքին գործերի նախարարը, այսինքն Թալեաթ Բեյը, առանց կառավարության որոշման և այդ կապակցությամբ ժամանակավոր օրենք ընդունելուց առաջ սկսեց հայերի տեղահանությունը և չխուսափեց այդ շատ ծանր պատասխանատվության միայնակ ստանձնելուց»⁴: Երիտթուրքական վերնախավին մոտ կանգնած անձերից մեկը՝ «Թանին» թերթի խմբագիր Հյուսեին Ջահիթ Յալչընը, որպես հիմնական դերակատար նշում է դոկտոր Բեհաեդդին Շաքիրին⁵:

Այսպիսով, երիտթուրքական վերնախավի կողմից հայերի հայրենագրկման և ոչնչացման ծրագիրը մշակվել էր այն նրբությամբ, որ քաղաքական որոշման ընդունման պատասխանատվությունը ընկնի փոքր շրջանակի վրա, ամեն դեպքում փորձելով զերծ պահել կուսակցության և կառավարության հիմնական շրջանակները: Այս քաղաքական գիծն իր զարգացումը ստացավ նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության պաշտոնական լուծարման և փոխարենը «Վերածնունդ» (Teceddüt) կուսակցության ձևավորման տեսքով: «Միություն և առաջադիմություն» կուսակցության վերջին համագումարում ընդունված որոշման համաձայն նորաստեղծ կուսակցությանը չէին կարող անդամակցել ՄԱ կուսակցության նախկին ղեկավարները⁶: Պատասխանատվությունը մի քանի անձերի վրա բարդելու մարտավարությունը իթթիհատականները վարում էին օսմանյան խորհրդարանում 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հինգերորդ հանձնաժողովի քննարկումների և 1919-1922 թթ. դատավարության ընթացքում⁷: Հինգերորդ հանձնաժողովի լսումների ժամանակ որոշ նախարարներ նույնիսկ հայտարարեցին, թե տեղահանությունից անտեղյակ էին և այդ մասին առաջին անգամ տեղեկացել էին

³ St' u Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü. 1994. 6-8.

⁴ St' u Yusuf Hikmet Bayur, 1983, 38.

⁵ St' u Hüseyin Cahit Yalçın, 2002, 83.

⁶ St' u Tark Zafer Tunaya, 2000, 663.

⁷ St' u Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları... 237.

«Միություն և առաջադիմություն» կուսակցության 1916 թ. համագումարում: Այդ համագումարում ներկայացված «հայերի դավաճանության» և «տեղահանության ստիպողական քայլ լինելու» վարկածը⁸ հանդիսացավ պաշտոնական տեսակետի հիմք, որն ամրագրվեց Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարության հատուկ հանձնաժողովի կողմից նույն տարի ֆրանսերեն լեզվով հրատարակված «Սահմանադրությունից առաջ հայկական կոմիտեների նպատակները և հեղափոխական շարժումները»⁹ գրքուկում:

Պատասխանատվությունը Իթթիհատի վերնախավի վրա գցելու գիծը, հատկապես, որ այդ վերնախավը լքել էր երկիրը, միաժամանակ փորձելով զերծ պահել ժողովրդին և հնարավորության դեպքում նաև կուսակցության հոծ զանգվածին, ակնհայտորեն ի հայտ է գալիս 1918-1921 թթ. ստամբուլյան մամուլի հրապարակումներում, ընդ որում ոչ միայն երիտթուրքական ուղղվածություն ունեցող, այլ նաև ընդդիմադիր: Իթիլաֆ կուսակցությանը նույնպես ձեռնտու էր նեղացնել պատասխանատվությունների շրջանակը և այդ կուսակցությանը մոտ կանգնած մտավորականությունը հայերի ոչնչացման պատասխանատվության հարցում գրեթե նույնությամբ կրկնում էր հակառակորդների փաստարկները: Այսպես, Իթիլաֆ կուսակցության ակտիվ անդամ Հասան Ամջան (Հասան Վասֆին) 1919 թ. ապրիլի 5-ին «Ալեմդար» թերթում հրապարակված իր «Շատ լավ, հարյուր հազարավոր հայերին ո՞վ սպանեց» հոդվածում գրում է. «Այդ որոշումը ընդունել էր Իթթիհատ վե Թերաքքիի հրոսակախումբը: Կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին էլ պարտադրեց իրականացնել այդ հատուկ միջոցառումները»¹⁰: Բանավիճելով իթթիհատական Սուլեյման Նազիֆի հետ և անդրադառնալով «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի խնդրին, Հասան Ամջան օրենքի ընդունման պատասխանատվությունը գցում է մի քանի անձանց վրա, նշելով. «Չորս արյունարբու հիմարի կողմից ընդունված որոշումն օրենք էք անվանում: Կարծես թե այդ

⁸ 1916 թ. համագումարում Թալեաթի ելույթը, որում նա ներկայացրեց տեղահանության խնդիրը, տե՛ս İttihat ve Terakki'nin Son Yılları, 1992, 18-23.

⁹ Տե՛ս Ermeni Komitelerinin Emelleri ve İhtilal Hareketleri. 2001.

¹⁰ Տե՛ս Հասան Ամջա, 2007, 23.

բառը բոլոր ոճրագործությունները մարդասիրության վերածելու ուժ ունի, և այդ օրինակով գործող պաշտոնյային էլ ներման արժանի էք համարում: Դա ի՞նչպես կլինի: Թալեաթի այդ հրամանն իրականացրած Ձեր կողմից նշված պաշտոնյան, նախևառաջ, մարդ է, իսկ հետո էլ՝ մահմեդական»¹¹:

Պատերազմի մեջ ներքաշելու և կայսրության քրիստոնյա ժողովուրդների ոչնչացման պատասխանատվությունը կուսակցության և կառավարության մի քանի անդամների վրա բարդելը թուրքական հասարակությանը հնարավորություն էր տալիս խուսափելու պարտված պետությունների միապետների պատասխանատվության մասնաբաժնի վերաբերյալ Փարիզի վեհաժողովում Անտանտի պետությունների կողմից բարձրացված հարցից: Սուլթան Վահդեդդինը Իթթիհատի պարագլուխներին հետապնդելու հրաման արձակելով փորձեց տարանջատել սուլթանական պալատը կառավարության գործած ոճրագործություններից: 1918 թ. նոյեմբերի 23-ին «Daily Mail» թերթի լրագրողին տված հարցազրույցում Վահդեդդինը հայտարարեց. «Մեծ ցավով տեղեկացա Թուրքիայում որոշ քաղաքական կոմիտեների հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Այդ տեսակի չարիքները և մեկ հայրենիքի զավակներ հանդիսացողների միջև տեղի ունեցած իրադարձությունները կոտրեցին իմ սիրտը: Գահին բարձրանալուց հետո իսկույն հրամայեցի անմիջապես հետաքննություն սկսել, որպեսզի այդ իրադարձությունների պատասխանատուներն անմիջապես պատժվեն: Մի շարք պատճառներ խոչընդոտեցին, որ այս հրամանս հարկ եղած ձևով ի կատար ածվի: Մակայն այսօր խնդիրն ամբողջ մանրամասնություններով հարցաքննվում է»¹²: Երիտթուրքերին դատելու արտակարգ ռազմական դատարան ստեղծելու որոշման հաստատումը սուլթանի համար Օսմանյան հարստության վրայից պատասխանատվության բաժինը հանելու փորձերից մեկն էր:

Հայերի տեղահանությանն ու ոչնչացմանը, նրանց ունեցվածքի թալանին վերաբերող հրապարակումները մամուլում, նույնիսկ իր հակաիթթի-հատական կեցվածքով աչքի ընկնող «Ալեմդարի» հոդվածները, հիմնականում վերաբերում են միջին օղակի պաշտոնյաններին, որոնք աչքի էին ընկել տարբեր շրջաններում հայերի ոչնչացման կազմակերպմամբ և ն-

¹¹ Նույն տեղում, 24:

¹² Տե՛ս Dr. Recep Karacakaya, 2005, 306.

րանց ունեցվածքի թալանով: Այսպես, պատերազմի տարիներին Մինոպ արտաքսված Ռեֆի Ջևադը «Ալեմդար» թերթում 1918 թ. դեկտեմբերից սկսեց հրատարակել իր հուշերի շարքը, որոնք հիմնականում վերաբերվում էին պատերազմի տարիներին արքայի վայրերում տեղի ունեցած դեպքերին¹³: Ռեֆի Ջևադի հուշերի երկրորդ շարքը, որը կապված էր հայերի ցեղասպանության հետ, հրապարակվեց 1918-1919 թթ. «Ալեմդար» թերթում «Տեսածներիցս և լսածներիցս» (Gördüklerimiz ve İstittiklerimizden) վերնագրի տակ: Այս արժեքավոր վկայությունների շարքում ուշագրավ են Տիրան Քելեքյանի, Գրիգոր Զոհրաբի և Վարդգես Սերենգուլյանի սպանությունների հետ կապված վկայությունները, քանի որ Ռեֆի Ջևադը հանդիպել էր վերջիններս հետ արքայի ճանապարհներին, իսկ Տիրան Քելեքյանի դեպքում նրա սպանության ականատեսն էր¹⁴:

Արտակարգ ռազմական աստիճանի դատավարությունները հանգամանալից լուսաբանվում և մեկնաբանվում էին մամուլում, հանդիսանալով տարբեր հայացքների տեր մտավորականների բախման առիթ: Միասնական տեսակետ այդ դատավարությունների վերաբերյալ չկար, սակայն նույնիսկ դատավարությունը պաշտպանող հոդվածներում առկա էր այն միտքը, որ դրանք կատարվում են ոչ թե բնակչության, այլ հաղթողների՝ առաջին հերթին Անգլիայի պահանջով: Մյուս կարևոր հանգամանքը, որ քննարկվում էր հակաիթթիհատական տրամադրվածություն ունեցող մտավորականության շրջանում, այն հանգամանքն էր, որ դատավարության ընթացքն ու ներկայացվող մեղադրանքներն այնպիսի տպավորություն էին ստեղծում, որ երիտթուրքերի դատավարություններն ուղղված էին ոչ թե հանցագործության մերկացմանը և դատապարտմանը, այլ փորձ էր կատարվում կոծկել ամենակարևոր խնդիրները և հայերի ոչնչացման ամբողջ մեղքը գցել մի շարք աննշան կատարողների վրա: Այդ տեսակետից ուշագրավ է Ռեֆի Ջևադի «Կառքի նժույզները ինչպիսին էին (Arabanın Beygirleri Nasıl İmiş?)»¹⁵ հոդվածը: Համեմատություններ անցկացնելով 1913թ. մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշայի սպանության դա-

¹³ Ռեֆի Ջևադի հուշերն անկանոն կերպով հրատարակվել են «Ալեմդար» թերթում 1918 թ. դեկտեմբերի 15-ից մինչև 1920 թ. փետրվարի 11-ը: Հետագայում դրանք հավաքվել և հրատարակվել են առանձին գրքով, տե՛ս Refi Cevat Ulunay, 1999.

¹⁴ Տե՛ս Diran Kelekyan Efendi'nin Vaziyeti, 1918.

¹⁵ Տե՛ս Arabanın Beygirleri Nasıl İmiş? «Alemdar» 20 Şubat 1919

տավարության հետ, հեղինակը նշում է, որ այդ դատավարությունը մեկ նիստով ավարտվեց և մեղավորները կախաղան բարձրացվեցին, որոնց թվում նաև սուլթանական ընտանիքի անդամներից մեկը: «Իսկ մենք դեռևս զբաղված ենք Քեմալ բեյի¹⁶ հանցագործությունների վկաների որոնմամբ: Հասկացանք, ամբողջ աշխարհն արդեն համոզվել է, որ այդ մարդը կատարել է այդ ոճրագործությունները: Ավելին ի՞նչ ենք ուզում»¹⁷:

Նույն շրջանում մամուլում լույս տեսան օսմանյան պաշտոնական տվյալները հայերի կորուստների մասին, որոնք, ըստ ներքին գործերի նախարար Ջեմալ բեյի կազմել էին 800 000¹⁸:

1918-1921 թթ. քննարկումներում առանձին խնդիր էր, թե եվրոպական հասարակական կարծիքը ինչպես է վերաբերում հայերի ցեղասպանության խնդրին: Առաջադեմ ուղղվածության մի շարք մտավորականներ գտնում էին, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եղած ոճիրը չի կարելի կոծկել, այն անհրաժեշտ է ճանաչել, և դրա պատասխանատվությունը թողնել այն սերունդի վրա, որ իրագործել է այն՝ մեղքից ազատելով հաջորդ սերունդներին: Այսպես, օրինակ, «Ալեմդար» թերթում հրապարակված «Արտասահմանն արդյոք ի՞նչ է ասում» հոդվածում ներկայացվում էր, որ բոլոր պարտված ժողովուրդների շարքում թուրքերն ամենավատ դրության մեջ են, քանի որ նրանց վրա սևացել է այն ահավոր ոճիրը, որ իրականացրել են քրիստոնյա հպատակների դեմ: Միաժամանակ պնդվում էր, որ ժողովուրդը մեղք չունի, ամբողջ պատասխանատվությունը ընկնում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարության վրա, պետք է ընդունել այդ և փակել այս խնդիրը¹⁹:

Կոստանդնուպոլսի մամուլում քննարկումների մեկ այլ առանձնահատկությունն այն էր, որ փորձ էր կատարվում հիմնավորել, թե Իթթիհատի կառավարությունը չարիք էր ոչ միայն քրիստոնյա փոքրամասնությունների, արաբների կամ ալբանացիների, այլ նաև թուրքերի համար²⁰:

¹⁶ Խոսքը գնում է բողայանի քայմակամ Քեմալ բեյի մասին – Ա.Ա.

¹⁷ St' u Arabanın Beygirleri Nasıl İmiş? «Alemdar» 20 Şubat 1919

¹⁸ Ջեմալ բեյն այս տեղեկությունները բերել էր Moniteur Orientale թերթի թղթակցի հետ հարցազրույցի ժամանակ: Մի քանի օր անց այն արտատպվել է «Ալեմդարում», տե՛ս 800.000 Yalnız Taktik Değil, Tehcir de Dahil. Cemal Beyefendinin Beyanâtı, «Alemdar», 17 Mart 1919

¹⁹ St' u Haric Acaba Ne Diyor? «Alemdar», 10 Teşrinisani 1918

²⁰ St' u Osmanlılar ve Mesuliete Teşrik, «Alemdar», 18 Kânunusani 1919

Մասնավորապես ներկայացվում էր, որ առաջին հերթին Իթթիհատի թուրանական ցնդաբանությունների գոհեր հանդիսացան թուրքերը²¹: «Ալեմդարի» հոդվածներից մեկում նշվում էր. «Թուրքերը ևս տեղահանվել են: Թուրքերը նույնպես մասայական կոտորածի են ենթարկվել: Ընդհանուր հանդիսացող այս խնդրից միայն հայերին վերաբերող հատվածն հանել և այսպես ամփսներով դրանով զբաղվել ճիշտ չէ»²²:

Այս հարցում հարկ է հաշվի առնել, որ թուրքերին ևս որպես ճնշված ազգ ներկայացնելու գծի վրա ազդեցություն է գործել այն ժամանակվա եվրոպական հասարակական կարծիքը, որում մեծ նշանակություն էին ձեռք բերել ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի առաջ քաշած 14 սկզբունքները, իսկ 1918-1921թթ. թուրք գործիչները, այդ թվում նաև Մուստաֆա Քեմալը, ԱՄՆ-ի մանդատի կողմնակից էին՝ այդ ճանապարհը դիտելով նաև որպես Հայկական հարցի լուծման ուղիներից մեկը²³:

Հայերի տեղահանության և մասայական ոչնչացման վերաբերյալ քննարկումներում նկատվող միտումները, պարզ է դառնում, որ հայերի «դավաճանության» և տեղահանության ստիպված մի միջոց լինելու թեզը, իսկ նրա վատ կազմակերպվածությունը գոհերի պատճառ հանդիսանալու պնդումների հետ մեկտեղ իթթիհատական մտավորականությունն առաջ էր տանում նաև այն միտքը, թե Օսմանյան կայսրությունում չի եղել հայերի մասայական ոչնչացում, այլ տեղի է ունեցել հայ-թուրքական փոխադարձ կոտորած (mukatele): 1919 թ. մայիսի 17-ին արտակարգ ռազմական դատարանի նիստում այդ թեզն առաջ է քաշել նաև Զիա Գյոքալպը, ասելով, թե «Թուրքիայում եղել է ոչ թե հայերի կոտորած, այլ թուրք-հայկական կոտորած: Մեզ մեջքից հարվածեցին, մենք էլ խփեցինք (Türkiye’de bir Ermeni katliamı değil, bir Türk-Ermeni mukatelesi olmuştur. Bizi arkadan vurdular, biz de vurduk)»²⁴:

Իթթիհատի կողքին հայ քաղաքական կուսակցությունների, առաջին հերթին Հ. Յ. Դաշնակցության մեղավորության գաղափարը հստակ արտահայտվեց նաև հակաիթթիհատական մտավորականության մոտ: Ջոհի ևս պատասխանատու լինելու գաղափարը, եթե ոչ հասարակ ժողովրդի,

²¹ Նույն տեղում:

²² Տե՛ս Arabanın Beygirleri Nasıl İmiş? «Alemdar», 20 Şubat 1919

²³ Տե՛ս Dr. Recep Karacakaya, 2005, 329-344.

²⁴ Տե՛ս Osman Selim Kocahanoğlu, 1998, 41.

այլ գոնե նրա քաղաքական վերնախավի մակարդակով, ներկայացվում է հայոց ցեղասպանության առաջին վկայություններից մեկում՝ 1919 թ. հրատարակված Ահմեթ Ռեֆիկի հեղինակած «Երկու կոմիտե՝ երկու ոճիր» (İki Komite, İki Kıtıl) հուշագրերում²⁵: Ահմեդ Ռեֆիկի աշխատությունում արտացոլված երկկողմանի պատասխանատվության գաղափարը 1919-1922 թթ. լայն ճանաչում գտավ, և թուրքական մտավորականությունն այս սին մտքով փորձում էր արդարացնել մարդկության դեմ կատարած հանցագործությունը:

1918-1921 թթ. հայերի ոչնչացման մասին ականատեսների հուշերի շարքում իրենց տեղն ունեն երիտթուրք առաջնորդների՝ Թալեաթի, Ջեմալի, Ջավիդի և մյուսների հուշերի հրապարակումները, որոնց հիմնական նպատակներից էր հայերի ոչնչացման գործում ներկայացնել իրենց անմեղությունը կամ իրենց արարքն արդարացնող փաստարկներ հորինել: Այն, որ երիտթուրք ղեկավարների հուշեր գրելու հիմնական պատճառներից մեկը հանդիսանում է հայերի ցեղասպանության մեղադրանքներից ազատվելը, երևում է նաև նրանում, որ Թալեաթի և Ջեմալի հուշերի զգալի մասը նվիրված են Հայկական հարցին²⁶: Նման ճանապարհով արդարանալու հարցում ազդեցություն են ունեցել երիտթուրքերի պարագլուխների շփումները Անտանտի պետությունների պաշտոնյաների հետ: Մասնավորապես, Թալեաթը վերջնական որոշում է կայացրել ներկայացնելու իր հուշերը անգլիացի լրտես Ա. Հերբերտի հետ հանդիպումներից հետո²⁷: Սակայն հուշեր շարադրելիս երիտթուրք պարագլուխները խախտեցին նախապես իրենց միջև ձեռք բերված պայմանավորվածությունը, այն է. համաձայնեցնել դրանք՝ հնարավորինս հանդես գալով միասնական դիրքերից: Սակայն այդ պայմանավորվածությունը առաջինը խախտեց Ջեմալը, որն իր հուշերը ընդհանրապես չներկայացրեց իր գործընկերներին, իսկ երկրորդը՝ Թալեաթը, որն իր

²⁵ Տե՛ս Ahmet Refik, *Kafkas Yollarında*. 1998; հայերեն թարգմանությունը տե՛ս Ահմեդ Ռեֆիկ, 1997.

²⁶ Թալեաթի և Ջեմալի հուշերը հրատարակվել են բազմաթիվ անգամ և տարբեր հրատարակություններում տարբերություններ կան, տե՛ս օրինակ, Talat Paşa'nın Anıları, 1986: Talat Paşa'nın Anıları, 2000; Bahriye Nazırı ve 4. Ordu Kumandanı Cemal Paşa Hatırat, İstanbul, ARMA, 1996: Cemal Paşa (Bahriye Nazırı ve 4. Ordu Kumandanı), Hatıralar, 2001: Ջեմալ փաշայի հուշերն առաջին անգամ լույս են տեսել Ստամբուլում 1919 թ., օսմաներեն:

²⁷ Տե՛ս Aubrey Herbert, 1924, P. 307, 328.

հուշերում անցանկալի կերպով ներկայացրեց Էնվերի դերակատարությունը, ինչը նրանց միջև լարվածության պատճառ դարձավ²⁸:

Ի տարբերություն Կոստանդնուպոլսի, գավառներում թշնամաբար էին տրամադրված հայերի ոչնչացման խնդրի արծարծմանը, առաջին հերթին հաշվի առնելով այն հանգամանքը, որ մուսուլման լայն զանգվածն ակտիվ մասնակցել էր ցեղասպանությանը և տիրացել հայերի ունեցվածքին: Արևմտյան Հայաստանում մուսուլմանների մտահոգությունը հայերի հավանական վերադարձի խնդիրն էր: Այսպես, 1920 թ. դեկտեմբերին «Փեյամը Սաբահ» (Peyam-ı Sabah) թերթը գրում էր. «Քեմալի լավագույն գնդերը կազմված են դատարանից խուսափած արհեստավարժ մարդասպաններից և հրոսակներից, որոնցից յուրաքանչյուրն անցյալում առնվազն հարյուր սպանություն է գործել»²⁹: Դրա հետ մեկտեղ հայերին հատուցելու, նախկին վերաբնակեցման վայրերում վերահաստատվելու և ունեցվածքի վերադարձման հարցերին նույն ստամբուլյան թուրքական թերթերը գերադասում են չանդրադառնալ:

Ամփոփելով 1918-1921 թթ. թուրքական մամուլում հայերի «տեղահանության և մասայական ոչնչացման» (tehcir ve taktıl) քննարկումների վերլուծությունը, հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ այդ քննարկումները թերի, անավարտ բնույթ էին կրում՝ ուղղված լինելով ցեղասպանության պատասխանատվության մեղքը մի շարք անհատների վրա բարդելուն՝ կոծկելու մուսուլման լայն զանգվածի մեղսակցության հանգամանքը, ինչպես նաև հնարավորինս խուսափելու փրկվածներին վերադարձի իրավունքի և հատուցելու հիմնահարցերի քննարկումից: Կարելի է ասել, որ նույնիսկ հակաիթթիհատական մտավորականության զանգվածի փոքր մասն էր գտնում միայն, որ հայերի վերադարձը հնարավոր է, իսկ մեծամասնությունը որպես ելակետ ընդունում էր հայերի հայրենագրկման և նախկին դրությունը վերադառնալու անհնարինության գաղափարը: Փրկվածների համար լավագույն դեպքում նախատեսվում էր որպես հնազանդ փոքրամասնություն ապրելու իրավունքի ճանաչում:

²⁸ St' u Maliye Nazırı Cavid Bey. 2000, 57, 124,

²⁹ St' u Архив Внешней Политики РФ (АВП РФ), ф. 132, Референтура по Турции, оп. 3, папка 2, д. 18, лл. 72-73.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սիմեոն Ռեֆիկ, Երկու կոմիտե՝ երկու ոճիր, թարգմանությունը թուրքերենից և առաջաբանը Սամվել Սուրադյանի, Երևան, 1997.

Հասան Ամջա. Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը), Երևան, 2007:

Aubrey Herbert, Ben Kendim. Record of Eastern Travel, London, 1924.

Ahmet Refik, Kafkas Yollarında. İki Komite İki Kıtıl, İstanbul, 1998;

Bahriye Nazırı ve 4. Ordu Kumandanı Cemal Paşa Hatırat, İstanbul, ARMA, 1996.

Cemal Paşa (Bahriye Nazırı ve 4. Ordu Kumandanı), Hatıralar, İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 2001.

Christopher R. Browning, The Path to Genocide. Essays on Launching the Final Solution, Cambridge University Press, New. York, 1992, P. 86-145.

Kelekyan Diran Efendi'nin Vaziyeti, 'Gördüklerimizden ve İşittiklerimizden', 'Alemdar', 20 Kânunuevvel, 1918.

Donald Niewyk and Francis Nicosia, The Columbia Guide to the Holocaust, Columbia University Press, New York, 2003.

Karacakaya Recep, 1908-1923 Türk Kamuoyu ve Ermeni Meselesi, İstanbul, 2005.

Ermeni Komitelerinin Emelleri ve İhtilal Hareketleri. Meşrutiyetten Önce ve Sonra, İstanbul, 2001.

Yalçın Hüseyin Cahit, Tanıdıklarım. Yaşantı, İstanbul, 2002.

İttihat ve Terakki'nin Son Yılları (1916 Kongre Zabıtları), İstanbul, 1992.

Maliye Nazırı Cavid Bey. Felaket Günleri. Mütareke Devrimin Feci Tarihi, cilt 2, İstanbul, 2000.

Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, İstanbul, 1986.

Kocahanoğlu Osman Selim, İttihat-Terakki'nin Sorgulaması ve Yargılaması (1918-1919), İstanbul, 1998.

Refi Cevat Ulunay, Sürgün Hatıraları (Menfalar Menfiler), İstanbul, 1999.

Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü. Osmanlı Arşivi Daire Başkanlığı. Yayın Nu: 14. Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), Ankara, 1994.

Talat Paşa'nın Anıları, Baskıya Hazırlayan: Mehmet Kasım, İstanbul, Say Yayınları, 1986.

Talat Paşa'nın Anıları, Hazırlayan: Alpay Kabacalı, İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 2000.

Tarık Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler, cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000.

Yusuf Hikmet Bayur, Türk İnkılabı Tarihi, cilt III, Kısım III, Ankara, 1983.

ԱրսենԱვაკյան, – 2013, Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013.

ARSEN AVAGYAN
Professor, PhD in History,
Director of Department for
Neighboring Countries MFA RA
a.avagyan@mfa.am

THE SUBJECT OF ARMENIAN GENOCIDE IN TURKISH PRESS IN 1918-1921

The Armistice of Mudros, signed on October 30, 1918, marked the end of the 10-year rule by the Committee of Union and Progress (1908-1918). The heavy defeat suffered in the War, the clandestine escape of the party and government leadership from the country, the fear of being held responsible for the crimes committed during the İttihat (Unionist) rule had created an atmosphere of bewilderment in the Turkish society. Taking into account the hearings of the 5th Committee of the Ottoman Parliament in November-December 1918, the trials of the Young Turks in 1919-1921, and the İtilaf Government's criticism of the crimes committed by the former government, one can assert that the first state which actually to recognize the Armenian Genocide, was Ottoman Empire, despite the fact that the process of punishing the criminals remained unfinished and the establishment of the Kemalist rule proved to be the second phase of the Young Turks' rule.

The author of this article tries to briefly address discussions about Armenians' deportation and mass killing (TehcirveTaktıl) in the Turkish press in 1918-1921. In the mentioned period, the Turkish society was divided into two conflicting and hostile groups, the İttihat (Unionist) and İtilaf (Freedom and Accord Party or the Liberal Entente) factions, and Nationalist Movement, which was organized according to the plan drawn up by the Young Turks back in the years of War, spread in Anatolia. Given the success of the Nationalist Movement, the İttihat influence increased and those who criticized Armenians' extermination gradually refused to publicly speak out about that issue.

Examining the publications in the Turkish press, one can assert that from the beginning, the discussions focused mainly on one of the aspects of the decision-making process and implementation of the deportations and mass killings, the

extermination of Western Armenians was carried out with a widespread involvement and participation of ordinary Muslim people³⁰ –Turks, Kurds, Circassians, etc. – although the circle of those who drew up the very plan of genocide and gave orders (perpetrators) was very narrow, even taking into consideration the fact that the decision of exterminating Armenians had been discussed among the Young Turks' leadership for many years and was made by a group of individuals.³¹

Most of the Turkish sources mention Talaat Pasha, the Minister of the Interior, as the person bearing the main responsibility for drawing up and carrying out the plan of Armenian Genocide³². Turkish historian Hikmet Bayur even stated that “the Minister of the Interior, i.e. Talaat Bey, started the deportations of Armenians without a government decision and before the provisional act adopted in that regard and did not avoid bearing that heavy responsibility by himself.”³³ A person close to the Young Turks' inner circle, the editor of “*Tanin*” newspaper, Hüseyin Cahid Yalçın, mentioned Dr. Behaeddin Şakir as the key actor in the genocide.³⁴

Thus, the leadership of the Young Turks drew up the plan of Armenians' deportation and extermination with one nuance, i.e., the responsibility for making the political decision will be borne by a small circle, trying, in any event, to shield not only the large masses of Muslims who took part in the genocide, but also the core of the party and the government. This policy was developed even after the Committee of Union and Progress was officially dissolved and replaced by the Renaissance (Teceddüt) Party. According to the decision made at the last congress of the Committee of Union and Progress, the former leaders of the Committee could not become members of the newly established party.³⁵ The tactics of shifting responsibility to a few individuals was used by the Unionists during the debates of the 5th Committee in the Ottoman Parliament in November-December 1918 and the trials of 1919-1921. During the hearings of the 5th Committee, several ministers

³⁰ Halil Monteshe, the Speaker of the Ottoman Parliament and Minister of Foreign Affairs in Talaat Pasha Government, was visited by one of the leaders of the İtilaf Party, Colonel Sadık in **Bekiraga Prison** and during a conversation with him Halil criticized the İtilaf Government for setting up Special Military Courts, stating, “There are very few Turks in Anatolia who have nothing to do with this deportation business (Bu tehcirişiyle alakadar olmayan Türk Anadolu’da pek azdır). By terrorizing a large part of the people like that you will make them retire to the mountains – in that important business, only unity and consolidation can protect the fatherland,” Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Mentşe’nin Anıları, İstanbul, 1986, 239.

³¹ See **Авакян Арсен**, 2013, 41-62.

³² Şu u Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü. 1994. 6-8.

³³ See Hikmet Bayur, 1983, 38.

³⁴ See Hüseyin Cahit Yalçın, 2002, 83.

³⁵ See Tarık Zafer Tunaya, 2000, 663.

even stated that they were not aware of the deportation and were informed about that at the 1916 congress of the Committee of Union and Progress. The idea of alleged “treachery of Armenians” and as if “the deportation was a required move” became the foundation of the official opinion that was committed to writing in the French booklet *The Goals and Revolutionary Movements of Armenian Committees before the Constitution*³⁶ published by the Special Committee of the Ministry of Foreign Affairs of the Ottoman Empire in the same year.

The policy of shifting the responsibility pursued by the İttihat leadership – particularly given the fact that this leadership had left the country, trying at the same time to shield the large mass of the population and, if possible, the party – became evident in the publications of the Istanbul press in 1918-1921, and not only in the pro-Unionist ones, but also in the pro-opposition ones. The İtilaf Party was also interested in narrowing the circle of those responsible and the intellectuals close to that party would put forward exactly the same arguments in terms of responsibility for the extermination of Armenians as their opponents. Thus, Hasan Amca (Hasan Vasfî), an active member of the İtilaf Party who rescued many Armenians in the Syrian Desert in 1916, wrote in the article *Fair Enough, but Who Killed Hundreds of Thousands of Armenians?* published in the newspaper *Alemdar* on April 5, 1916, “That decision was made by the İttihatveTerakki gang. And it forced the high-level officials in the government to take those special measures.”³⁷ Polemicizing with Suleiman Nazif from İttihat about the Provisional Deportation Act, Hasan Amca shifts the whole responsibility for the adoption of the act to a few persons, stating, “You call a decision made by four bloodthirsty fools a law?! As if that word has the power of turning all crimes into humanity and you consider an official who acts in accordance with that pattern to be worth pardon. How can that be? The official whom you mentioned and who carried out Talaat’s order is, first and foremost, a man and then a Muslim.”³⁸

Shifting the responsibility for being drawn into War and exterminating the Christian population of the Empire to a few members of the party and the government made it possible for the Turkish society to avoid the share of responsibility to be borne by the monarchs of the defeated states according to the terms set by the Allies at the Paris Peace Conference. By ordering the persecution of the İttihat leaders Sultan Vahideddin tried to separate the Sultan’s palace from

³⁶ See Ermeni Komitelerinin Emelleri ve İhtilal Hareketleri. 2001.

³⁷ See Հասարակական Ազդեցություն, 2007, 23:

³⁸ Ibid. 24.

the crimes committed by the government. On November 23, 1918, Vahdeddin stated in an interview with a *Daily Mail* reporter, “With great sorrow did I find out about the attitude toward Armenians, which made some committees in Turkey. Such evil and the events that took place between the sons of one fatherland broke my heart. After I assumed the throne, I immediately gave an order to start an investigation, in order to punish all those responsible for these events. A number of reasons prevented this order from being carried out in a proper way. However, the issue is being investigated in every detail today.”³⁹ Making a decision to establish a special military court to try the Young Turks was one of the possibilities for the sultan to relieve the Ottoman Dynasty of any responsibility.

It is striking that the publications in the press about Armenians’ deportation and extermination, the robbery of their property, even the articles in *Alemdar* that stood out for its anti-Unionist attitude were mostly about middle-level officials who had been involved in the organization of Armenians’ extermination in different regions and the robbery of their property. One of the author of articles was RefiCevat who had been exiled to Sinop during the War started in December 1918 to publish the series of his memoirs, which were mainly about the incidents that took place in the places of his exile during the war.⁴⁰ The second series of RefiCevat’s memoirs, which was related to the Armenian genocide, was published in the newspaper *Alemdar* in 1918-1919 and was entitled *From What I Saw and What I Heard* (Gördüklerimizveİştiklerimizden). These testimonies are worth attention for their accounts of DiranKelekian’s, KrikorZohrab’s, and VartkesSerengülian’s deaths, since RefiCevat met them on his way to exile and was a witness of DiranKelekian’s death.⁴¹

The trials of the Special Military Chamber were covered and commented on in the press, causing arguments between intellectuals having different points of view. There was no general opinion on those trials, though even in the articles that supported the trials contained the idea that they were held not to meet the public demand, but at the behest of the victors, England above all. Another important factor that was discussed among the anti-Unionist intellectuals was the issue that the process of trials and the charges brought up made an impression that the trials

³⁹ Dr. Recep Karacakaya, 2005, 306.

⁴⁰ Refi Cevat’s memoirs were irregularly published in the newspaper *Alemdar* from December 15, 1918 to February 11, 1920. Later on, they were collected and published in a separate book, see Refi Cevat Ulunay, 1999.

⁴¹ See Diran Kelekian Efendi’nin Vaziyeti, “Gördüklerimizdenveİştiklerimizden”, “Alemdar”, 20 Kânunuevvel, 1918.

against the Young Turks did not aim at revealing or condemning the crime, but rather tried to cover up the most important issues and shift the blame on to a group of trifle perpetrators. From that perspective, RefiCevad's article *What Kind of Cart Horses Were There?* (Arabanın Beygirleri Nasıl İmiş?) is worth attention.⁴² Drawing comparisons with the trial of Grand Vizier Mahmud Shevket Pasha's assassination in 1913, the author states that this trial was finished in one session and the guilty, among which was a member of the sultan's family, were hanged. "And we are still searching for the witnesses of Kemal Bey's⁴³ crimes. All right, the whole world is convinced that this man committed those crimes. What else do you want?"⁴⁴

In the same period, the press published official data on Armenian losses, which – according to Minister of the Interior DjemalBey – were 800 000.⁴⁵

During the discussions in 1918-1921, the issue of the European society's attitude toward the Armenian genocide was a separate topic. Several progressive intellectuals thought that given the fact that the crime that had been committed could not be covered up, it had to be recognized and the responsibility for it would rest with the generation that had committed it, relieving the coming generations of guilt. It was posited that Turks were in the most miserable state compared with the other defeated nations, since they were besmirched with the terrible crime that they had committed against their Christian subjects. At the same time, it was stated that the people were innocent, the whole responsibility rested with the leadership of the Committee of Union and Progress – one should admit that and settle the matter.⁴⁶

Another subtlety of the discussions in the Constantinopolis press was that an attempt was made to explain that the İttihat Government was an evil not only for Christian minorities, Arabs, or Albanians, but also for the Turks themselves.⁴⁷ In particular, they would posit that the Turks were the first to suffer from İttihat'sTuranian nonsense.⁴⁸ One of the articles published in *Alemdar* argued, "Turks have also been deported. Turks have also been subjected to mass killing. It

⁴² See Arabanın Beygirleri Nasıl İmiş? "Alemdar" 20 Şubat 1919.

⁴³ Meaning kaymakam (governor) of Boğazlıyan Kemal Bey, A.A.

⁴⁴ Arabanın Beygirleri Nasıl İmiş? "Alemdar" 20 Şubat 1919.

⁴⁵ Cemal Bey presented these data during an interview with the newspaper Moniteur Orientale. A few days later it was republished in *Alemdar*, see 800.000 Yalnız Taktıl Değil, Tehcir de Dahil. Cemal Beyefendinin Beyanâtı, "Alemdar", 17 Mart 1919.

⁴⁶ See Haric Acaba Ne Diyor? "Alemdar", 10 Teşrinisani 1918.

⁴⁷ See Osmanlılar ve Mesuliete Teşrik, "Alemdar", 18 Kânunusani 1919.

⁴⁸ Ibid.

is not right to extract the Armenian part from that common issue and deal with it for months now.”⁴⁹

In this regard, one should consider the fact that the policy of presenting the Turks as an oppressed nation was influenced by the atmosphere in the European society of the time, in which Woodrow Wilson’s *Fourteen Points* had gained great popularity, and the Turkish public figures of 1918-1921, including Mustafa Kemal, supported the US mandate, considering that path as one of the ways of solving the Armenian Question.⁵⁰

Analyzing the tendencies of discussions about the deportation and mass killings in the Turkish press, it becomes obvious that along with the claims that the deportation caused by Armenians’ treachery was a required measure, bad organization of which led to loss of life, the İttihat intellectuals developed a thesis that there had been no mass killing of Armenians in the Ottoman Empire, but rather there had been a mutual massacre (mukatele). On May 17, 1919, Ziya Gökalp put that thesis forward during the May 17, 1919, session of the Special Military Court, saying that “there has been no Armenian massacre in Turkey, but rather a Turkish-Armenian massacre. They stabbed us in the back and we stabbed back (Türkiye’de bir Ermeni katliamı değil, bir Türk-Ermeni mukatelesi olmuştur. Bizi arkadan vurdular, biz de vurduk).”⁵¹

The idea of blaming the Armenian political parties – first of all, the Armenian Revolutionary Federation (ARF) – along with İttihat was clearly expressed also by the anti-Unionist intellectuals. The idea of responsibility to be assumed by the victim, the nation’s political elite if not the whole Armenian nation was expressed in one of the first accounts of the Armenian Genocide, in Ahmed Refik’s memoirs entitled *Two Committees, Two Crimes* (İki Komite, İki Kıtıl) and published in Istanbul in 1919.⁵² Ahmed Refik’s idea of mutual responsibility expressed in his work became widespread in 1919-1921 and the Turkish intelligentsia tried to use this empty idea to justify the crime committed against humanity.

Among the accounts of witnesses of the Armenian Genocide published in 1919-1921 were the memoirs of the Young Turks’ leaders Talaat, Djemal, Djavid, and others, whose main purpose was to present themselves as innocent of Armenians’ extermination or to put forward arguments justifying their deed. The fact that the most part of Talaat’s and Djemal’s memoirs is dedicated to the

⁴⁹ See Arabanın Beygirleri Nasıl İmiş? “Alemdar” 20 Şubat 1919.

⁵⁰ See Dr. Recep Karacakaya, 2005, 329-344.

⁵¹ See Osman Selim Kocahanoğlu, 1998, 41.

⁵² See Ahmet Refik, 1998; for the Armenian translation see Միմեն Ռեֆիկ, 1997.

Armenian Question also proves that one of the main reasons why the leaders of the Young Turks decided to write memoirs was to disburden themselves of the accusations concerning the Armenian Genocide.⁵³ This choice of justification was influenced by the contacts of the Young Turks' leaders with the Allied officials. In particular, Talaat made the final decision on publishing his memoirs after a conversation with A. Herbert, an English spy.⁵⁴ However, while committing their memoirs to paper the leaders of the Young Turks broke the agreement among them to be consistent with each other and maintain coherence. In any event, Djemal was the first to break that agreement and did not show his memoirs to his colleagues at all. Then Talaat broke it, presenting Enver's role in a negative light, which caused tensions between them.⁵⁵

As opposed to the social atmosphere in Istanbul, the atmosphere in Anatolia was opposed toward mentioning Armenians' extermination, first of all given the fact that the Muslim masses had taken an active part in the genocide and looted the Armenians' property. In Western Armenia in particular, the main issue that concerned the Muslim society was Armenians' possible return. Thus, the Istanbul newspaper *Peyam-ı Sabah* wrote in December 1920, "Kemal's best units were composed of skillful murderers and gangsters who have avoided trial and each of whom had formerly committed at least 100 murders."⁵⁶ However, those same Istanbul newspapers preferred not to write about the compensation to Armenians, their resettlement, and the return of their property.

Recapitulating discussions about Armenians' "deportation and mass killing" in the Turkish press in 1918-1921, one must state that, in sum, they were fragmentary, incomplete and aimed at shifting the blame for the genocide on to a group of individuals, covering up the complicity of the Muslim masses, as well as avoiding, if possible, discussion of the return and compensation to survivors. One can say that only a small part of the anti-Unionist intellectuals thought that the Armenians' return was possible, whereas the greater part considered Armenians'

⁵³ Talaat's and Djemal's memoirs have been published many times and when comparing different publications it is clear that there are differences in texts, see, for example, Talat Paşa'nın Anıları, Baskıya Hazırlayan: Mehmet Kasım, İstanbul, Say Yayınları, 1986; Talat Paşa'nın Anıları, Hazırlayan: Alpay Kabacalı, İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 2000; Bahriye Nazırı ve 4. Ordu Kumandanı Cemal Paşa Hatırat, İstanbul, ARMA, 1996; Cemal Paşa (Bahriye Nazırı ve 4. Ordu Kumandanı), Hatıralar, İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 2001. Djemal Pasha's memoirs written in Ottoman Turkish were first published in İstanbul in 1919.

⁵⁴ See Aubrey Herbert, Ben Kendim. Record of Eastern Travel, London, 1924, P. 307, 328.

⁵⁵ See Maliye Nazırı Cavid Bey. 2000, 57, 124.

⁵⁶ See Архив Внешней Политики РФ (АВП РФ), ф. 132, Референтура по Турции, оп. 3, папка 2, д. 18, лл. 72-73.

expatriation and the impossibility of their return as a starting point. The survivors were to be given a right to live as an obedient minority at best.

BIBLIOGRAPH

- Ahmet Refik, Kafkas Yollarında. İki Komite İki Kıtıl, İstanbul, 1998.
- Aubrey Herbert, Ben Kendim. Record of Eastern Travel, London, 1924, P. 307, 328.
- Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü. 1994. 6-8.
- Dr. Recep Karacakaya**, 1908-1923 Türk Kamuoyu ve Ermeni Meselesi, İstanbul, 2005, s. 306.
- Ermeni Komitelerinin Emelleri ve İhtilal Hareketleri. Meşrutiyetten Önce ve Sonra, İstanbul, 2001.
- Hikmet Bayur, Türk İnkılabı Tarihi, cilt III, Kısım III, Ankara, 1983, s. 38.
- Hüseyin Cahit Yalçın, Tanıdıklarım. Yaşantı, İstanbul, 2002, s. 83.
- Maliye Nazırı Cavid Bey. Felaket Günleri. Mütareke Devrimin Feci Tarihi, cilt 2, İstanbul, 2000, s. 57, 124.
- Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Mentеше'nin Anıları, İstanbul, 1986, s. 239.
- Osman Selim Kocahanoğlu, İttihat-Terakki'nin Sorgulaması ve Yargılaması (1918-1919), İstanbul, 1998, s. 41.
- Refi Cevat Ulunay, Sürgün Hatıraları (Menfalar Menfiler), İstanbul, 1999.
- Tarık Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler, cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000, s. 663.
- Ահմեդ Ռեֆիկ**, Երկու կոմիտե՝ երկու ոճիր, թարգմանությունը թուրքերենից և առաջարանը Սամվել Մուրադյանի, Երևան, 1997.
- Հասան Ամջա**, Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրականատկերը), Երևան, 2007, էջ 23:
- Авакян Арсен, Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013, с. 41-62.

АРСЕН АВАГЯН

*Профессор, доктор исторических наук
a.avagyan@mfa.am*

ВОПРОС ГЕНОЦИДА АРМЯН В ТУРЕЦКОЙ ПРЕССЕ В 1918-1921 ГГ.

РЕЗЮМЕ

После поражения в первой мировой войне и падения режима правления младотурецкой партии “Единение и Прогресс” турецкое общество пребывало в растерянности и одной из самых обсуждаемых тем стал вопрос о “депортации и массовом уничтожении” армянского населения Османской империи в годы войны. В ноябре-декабре 1918г. состоялись слушания в пятом комитете османского парламента, а в 1919-1921 гг. прошли судебные процессы над младотурками, при этом в 1919 г. официальные лица империи озвучили потери армян во время геноцида. Все это дает основание утверждать, что Османская империя оказалась первым государством, де-факто признавшим факт массового истребления армян.

Особенностью обсуждения вопроса о “переселении и массовом уничтожении” армян было стремление как иттихадисткой, так и оппозиционной итиляфистской прессы и интеллигенции ответственность за это преступление против человечности возложить на узкий круг лиц, при этом всячески противодействуя попыткам возложения ответственности как на мусульманское население так и султанскую власть. В публикациях стамбульской прессы основное внимание акцентировалось на освещении роли среднего чиновничьего звена в деле организации и осуществления геноцида армян.

При освещении судебного процесса над младотурками оппозиционная итиляфистская пресса обращала внимание, что организация и сам ход процесса наводит на мысль, что военный трибунал стремиться не к выявлению всех деталей преступления и возможно скорому осуждению преступников, а пытается скрыть многие важные аспекты этого преступления против человечности.

Во многих публикациях поднимался вопрос как европейское общественное мнение относится к преступлению младотурецкого правительства в отношении христианского населения империи и насколько пострадал имидж турок. Некоторые общественные деятели, учитывая, что факт преступления не-

возможно скрыть или отрицать, предлагали признать его, тем самым избавив последующие поколения от ответственности за эту черную страницу истории. При этом оппозиционная Иттихаду пресса старалась показать, что не только армяне, но и сами турки являются жертвами жестокого правления младотурецкого режима и неверно выделять и акцентировать внимание лишь на армянском вопросе.

В 1919-21 гг. иттихадистские деятели вместе с тезисом, что не было геноцида, а жертвы среди мирного армянского населения являются следствием плохо организованного переселения, выдвинули и иной тезис о том, что в Османской империи якобы не было массового уничтожения армян, а была взаимная армяно-турецкая резня. Наряду с этим даже прогрессивные деятели, типа Ахмед Рефика, пытались обосновать тезис, что наряду с Иттихадом армянские политические партии, в первую очередь Дашнакцутюн, также несут ответственность за то, что произошло с армянским населением.

В 1919-1921 гг. лидеры младотурок в своих мемуарах изложили свою точку зрения на переселение и массовое уничтожение. При этом среди них первоначально была достигнута договоренность о сверке и согласовании изложения, которое в последствии было нарушено.

Ответственность за уничтожение армянского населения стала консолидирующим фактором в объединении принявшего участие в геноциде армянского народа мусульманского населения Анатолии вокруг националистического движения. При этом даже прогрессивная часть турецкого общества неохотно обсуждала вопрос возвращения армянского населения и возмещения ему нанесенного ущерба, принимая за исходный пункт свершившийся факт патрицида армян, и в лучшем случае признавая за выжившими возможность существовать в новом государстве в качестве национального меньшинства.